ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2003-2004 ԹԹ

Տեղեկագիրը նախատեսված չէ վաճառքի համար

Երևան 2005

Տեղեկագիրը մշակված է «Լոգիկոն Դիվելփմենթ» ՍՊԸ կողմից՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ պատվերով: Տեղեկագրում առկա վիճակագրական տվյալները հաշվարկված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող բազային ցուցանիշների, ՀՀ կառավարությանն առնթեր հարկային պետական ծառայության, ՀՀ կառավարությանն առնթեր մաքսային պետական կոմիտեի, ինչպես նաև սույն տեղեկագրի մշակմանն առնչվող այլ աղբյուրներից հավաքագրված ոչ պաշտոնական տեղեկատվության հիման վրա:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը և «Լոգիկոն Դիվելփմենթ» ՍՊԸ-ն պատասխանատվություն չեն կրում սույն տեղեկագրում ներկայացված տվյալների համար:

Տեղեկագրում բերված տվյալների օգտագործումը առանց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համաձայնության չի թույլատրվում:

© Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, 2005

Հրատարակվել է 800 օրինակ

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ կենտրոնական գրասենյակ

ք. Երևան 375010, Մ. Մկրտչյան 5
հեռ.՝ (374 10) 54 16 48; 56 37 14; 54 16 45; 58 32 61
ֆաքս՝ (374 10) 54 16 42
էլ-փոստ՝ info@smednc.am
էլ. էջ՝ www.smednc.am

Անվիճելի է այն, որ փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) անկյունաքարային նշանակություն ունի ազատական տնտեսությունների կայացման ու զարգացման գործում: Այն յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման, տնտեսական աճի կայունության և սոցիալական դժվարությունների հաղթահարման հիմնական երաշխիքներից մեկն է: ՓՄՁ ոլորտի զարգացումը առավել է կարևորվում անցումային տնտեսությամբ երկրների համար, քանի որ նպաստում է անկախ ու ինքնաբավ ձեռնարկատերերի խավի կայացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը, ներքին շուկայի ծավալների ընդլայնմանը, արտաքին շուկաներում տեղական ապրանքների մրցունակության բարձրացմանը և արտահանման ծավալների ավելացմանը, ինչպես նաև պարապուրդի մատնված արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործմանը՝ ապահովելով երկրում քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունություն:

Չնայած նրան, որ ՓՄՁ սուբյեկտների խնդիրներն անցումային տնտեսությամբ երկրներում հիմնականում նույնն են, դրանց դրսևորման ձևերը և լուծումների մեթոդները և ուղիները դրանցից յուրաքանչյուրում պայմանավորված են այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են տվյալ երկրի տնտեսության զարգացման ուղղվածությունն ու մակարդակը, շուկայական հարաբերությունների կայացման աստիճանը, ազգային մտածելակերպը, համապատասխան օրենսդրական դաշտի առկայությունը, ֆինանսական, հարկային, մաքսային համակարգերի գործառնման արդյունավետության աստիճանը և այլն:

Այդպիսի գործոնների վերացումը կամ դրանց ազդեցության էական սահմանափակումը, ինչպես նաև առաջընթացի գնահա-

տումն առաջացնում են մշտական դիտարկումների, ուսումնասիրությունների անհրաժեշտություն, որոնց միջոցով ստացված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում ՓՄՁ պետական աջակցության քաղաքականության գերակայություններում համապատասխան փոփոխություններ իրականացնելու և նոր ծրագրեր մշակելու համար: Այդ նպատակն է հետապնդում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի» կողմից հրատարակված «ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» տեղեկագիրը:

Սույն հրապարակումը միջազգային չափորոշիչներին համապատասխան ՓՄՁ ոլորտի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացման առաջին փորձն է Հայաստանում:

Հուսով եմ, որ տեղեկագրում ընդգրկված տեղեկատվությունն օգտակար կլինի ոլորտի հետագա զարգացման լավագույն ուղիների բացահայտման և կուտակված հիմնախնդիրների լուծման համար:

Կ. Ճշմարիտյան

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար,
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հոգաբարձուների խորհրդի
նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ---------- 6

ՄԱՍ 1. Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ներկայացնող ցուցանիշներ ---------- 8

- *Համախառն ներքին արդյունք*
- *Կազմակերպությունների քանակ*
- *Զբաղվածություն*
- *Արտադրողականություն*
- *Արտաքին առևտուր*
- *Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ինդեքս*

ՄԱՍ 2. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համեմատական վերլուծություն----------29

ՎԵՐՋԱԲԱՆ ---------- 37

Նախաբան

ՓՄՁ ոլորտի ազդեցությունը տնտեսության զարգացման վրա դժվար է գնահատել առանց առանձնացված և համապարփակ վիճակագրական վերլուծության: Նման վիճակագրական տեղեկատվության առկայությունը հնարավորություն կընձեռի ոչ միայն գնահատել ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում, այլ նաև հաշվի առնել այդ տվյալները ոլորտի զարգացման ու աջակցության ծրագրեր մշակելիս և իրականացնելիս:

Վերոնշյալ բացը լրացնելու նպատակով Հայաստանի ՓՄՁ - ԶԱԿ կողմից ՓՄՁ պետական աջակցության 2005 թվականի ծրագրի շրջանակներում նախաձեռնվել և մշակվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» տեղեկագիրը, որը հանդիսանում է առաջին քայլը Հայաստանում ՓՄՁ ոլորտի վերաբերյալ ամփոփ վիճակագրությունը միջազգային մեթոդաբանությանը համապատասխանեցնելու և համակարգված ներկայացնելու ուղղությամբ:

Տեղեկագրում իրականացված վերլուծություններն ու ներկայացված տեղեկատվությունը մասամբ հիմնված են առկա վիճակագրական տվյալների վրա և ներառում են ինչպես միջազգային պրակտիկայում ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրական ցուցանիշներ, որոնց հաշվարկման պրակտիկան մինչ այժմ չի կիրառվել Հայաստանում, այնպես էլ՝ արդեն իսկ առկա ցուցանիշների վերլուծության ներկայացումը: Բացի այդ, տեղեկագրում կարևոր տեղ է հատկացված Հայաստանի և մի շարք երկրների ՓՄՁ ոլորտը ներկայացնող ցուցանիշների համեմատությանը:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» տեղեկագիրը ներկայացնում է ոլորտի զարգացման

դինամիկան և միտումները, ինչպես նաև հանդիսանում է ՓՄՁ սուբյեկտների գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության և ցուցանիշների կարևոր աղբյուր և վերլուծական նյութ:

Այս ձեռնարկը ՓՄՁ ոլորտի հիմնահարցերով զբաղվող պետական և մասնավոր կառույցներին, միջազգային կազմակերպություններին, գիտակրթական հաստատություններին, ինչպես նաև գործարար համայնքի ներկայացուցիչներին կապահովի Հայաստանում ՓՄՁ ոլորտի վերաբերյալ անհրաժեշտ, լիարժեք և անաչառ տեղեկատվությամբ:

ՄԱՍ 1

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ներկայացնող ցուցանիշներ

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների դասակարգումը Հայաստանում

Հայաստանում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են ելնելով աշխատողների թվաքանակից՝ հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը:

ՓՄՁ սուբյեկտներ են համարվում.

Աղյուսակ 1

Դասակարգում / Ոլորտ	ՓՄՁ սուբյեկտներ		
	Գերփոքր [աշխատողների թվաքանակ/ մարդ]	**Փոքր** [աշխատողների թվաքանակ/ մարդ]	**Միջին** [աշխատողների թվաքանակ/ մարդ]
Արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում	5	50	100
Շինարարության և էներգետիկայի բնագավառում	5	25	50
Գիտության և կրթության բնագավառում	5	25	50
Տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում	5	15	30

Համախառն ներքին արդյունք

Երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ամենակարևոր ցուցանիշի՝ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2004թ. կազմել է 1 893 436.2 մլն դրամ, 2003 թ. 1 623 336.2 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի աճի տեմպը 2004թ. կազմել է 110.1 %՝ 2003թ. 113.9 %-ի դիմաց:

Աղյուսակ 2

2003 և 2004 թթ. ՀՆԱ-ի կառուցվածքը տնտեսության ճյուղերով ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների

Ճյուղ	2003 թվական		2004 թվական	
	ՓՄՁ սուբյեկտներ	Խոշոր	ՓՄՁ սուբյեկտներ	Խոշոր
	[%]		[%]	
Արդյունաբերություն	**27.2**	72.8	**29.7**	70.3
Շինարարություն	**38.8**	61.2	**43.1**	56.9
Առևտուր	**56.8**	43.2	**58.4**	41.6
Տրանսպորտ և Կապ	**36.1**	63.9	**33.3**	66.7
Ծառայություններ	**32.9**	67.1	**34.1**	65.9
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՆԱ[1]	**36.5**	**63.5**	**38.6**	**61.4**

Աղյուսակ 2-ում ներկայացված է տնտեսության համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները ստացվել են հիմք ընդունելով տնտեսության յուրաքանչյուր ճյուղում արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) թողարկման բաշխվածությունն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների արտարկման մեթոդի կիրառմամբ: Արդյունքում, հնարավոր է դարձել գնահատել ՀՆԱ-ի կազմում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը: Սակայն, գնահատականը հաշվի չի առնում գյուղատնտեսության և զուտ հարկերի բաշխվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների, պայմանավորված նշված ոլորտներում ճշգրիտ գնահատականների բացակայությամբ: Ընդ որում, եթե հարկերի դեպքում կարելի է ընդունել այն մոտեցումը, որ դրանք բաշխվում են ավելացված արժեքի բաշխմանը համապատասխան (որի դեպքում ստացված տոկոսները փաստորեն չեն փոփոխվում), ապա գյուղատնտեսության դեպքում գնահատման որևէ մոտավոր չափանիշ չկա, չնայած ակնհայտ է, որ այն առավելապես ուղղված պետք է լինի ՓՄՁ սուբյեկտներին:

ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը 2004 թ. ՀՆԱ-ի մեջ կազմել է

[1] Առանց գյուղատնտեսության և զուտ հարկերի:

38.6% կամ 730 866.4 մլն. դրամ, 2003 թ. 36.5%-ի կամ 592 517.7 մլն դրամի դիմաց, այսինքն՝ 2.1 տոկոսային կետով կամ 138 348.6 մլն դրամով ավելի:

Վերը նշված ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ՀՀ-ում արձանագրվել են ՀՆԱ-ի աճի կայուն միտումներ: ՀՆԱ-ի աճը մեծապես պայմանավորված է տնտեսության հիմնական ճյուղերի աճով: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ այդ ճյուղերում նշանակալի դեր ունեն նաև ՓՄՁ սուբյեկտները, ինչն առավել պատկերավոր ներկայացված է Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1 Գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների տեսակարար կշիռն ըստ ՀՆԱ-ի արտադրության տնտեսության տարբեր ճյուղերում 2003 և 2004 թթ.



Գծապատկերը ցույց է տալիս, որ ըստ ՀՆԱ-ի արտադրության նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը հատկապես առևտրի, շինարարության և ծառայությունների բնագավառներում, ինչպես նաև զգալի է ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը արդյունաբերությունում: Հատկանշական է, որ ըստ ՀՆԱ-ի արտադրության ՓՄՁ տեսակարար կշիռը առևտրի ոլորտում 2004թ. նախորդ տարվա համեմատ ավելացել է 1.6 տոկոսով: Այս ցուցանիշը արդյունաբերության և շինարարության ոլորտում համապատասխանաբար կազմում է 2.5 և 4.3 տոկոս: Դրա հետ մեկտեղ 2004թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ըստ ՀՆԱ-ի արտադրության ՓՄՁ տեսակարար կշռի նվազման միտում տրասպորտի և կապի ոլորտում, որը կազմել է 2.8 տոկոս: Ծառայությունների ոլորտում ՓՄՁ տեսակարար կշիռը ավելացել է 1.2 տոկոսով:

Գծապատկեր 2 Գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների տեսակարար կշիռների դինամիկան ՀՆԱ-ի մեջ 2003 և 2004 թթ.



Աղյուսակ 3

Գերփոքր, փոքր, միջին և խոշոր կազմակերպությունների կողմից 2003 և 2004թթ. ՀՆԱ-ի արտադրությունը մարզային բաշխվածությամբ

Մարզը	2003 թվական				2004 թվական			
	ՓՄՁ սուբյեկտներ [%]			Խոշոր [%]	ՓՄՁ սուբյեկտներ [%]			Խոշոր [%]
	Գերփոքր	Փոքր	Միջին		Գերփոքր	Փոքր	Միջին	
Երևան	**12.8**	**14.0**	**10.4**	**64.0**	**13.8**	**13.2**	**11.7**	**62.6**
Ընդամենը մարզեր[2]	**8.6**	**15.6**	**9.6**	**66.2**	**9.1**	**15.3**	**10.1**	**65.6**
Արագածոտն	15.1	23.4	8.5	53.1	15.3	23.6	8.4	52.7
Արարատ	6.7	20.9	8.8	63.6	6.9	20.9	8.9	63.3
Արմավիր	6.7	14.1	4.1	75.1	6.9	14.0	4.1	74.9
Գեղարքունիք	20.0	9.5	24.2	46.4	20.2	9.5	24.1	46.1
Լոռի	12.7	15.7	6.9	64.7	12.9	15.7	7.0	64.4
Կոտայք	7.0	11.5	5.0	76.6	7.2	11.4	5.2	76.3
Շիրակ	5.7	14.0	20.5	59.8	5.9	13.9	20.6	59.6
Սյունիք	3.5	16.6	4.6	75.4	3.6	16.5	4.6	75.3
Վայոց Ձոր	20.6	20.6	7.5	51.3	21.1	20.7	7.5	50.7
Տավուշ	12.1	21.8	6.8	59.3	12.3	21.8	6.8	59.0
ԸՆԴԱՄԵՆԸ, ՀՀ	**11.0**	**15.7**	**9.9**	**63.5**	**12.3**	**14.6**	**11.7**	**61.4**

Նկար 1 ՓՄՁ սուբյեկտների կողմից 2004 թ. ՀՆԱ-ի արտադրությունը մարզային բաշխվածությամբ, տոկոսներով



[2] Առանց քաղաք Երևանի:

Նկար 2 ՓՄՁ սուբյեկտների կողմից 2003 թ. ՀՆԱ-ի արտադրությունը մարզային բաշխվածությամբ, տոկոսներով



Կազմակերպությունների քանակ

01.01.2005թ. դրությամբ գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ընդհանուր թվաքանակը[3] կազմել է 125189, որոնցից 67116-ը՝ անհատ ձեռնարկատերեր են, իսկ 58073-ը՝ իրավաբանական անձինք: 58073 գրանցված իրավաբանական անձանցից 51480 առևտրային են, որոնցից համաձայն ՀՀ օրենսդրությանը տնտեսական գործունեության իրավունք ունեն 28820 առևտրային իրավաբանական անձինք:

[3] ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թ. հունվար-դեկտեմբերին»:

Աղյուսակ 4

Գրանցված տնտեսվարող սուբյեկտների (առևտրային իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր) ընդհանուր թվաքանակի դինամիկան 2003 և 2004թթ.[4]

Տնտեսվարող սուբյեկտներ	2003 թ.	2004 թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, [%]	Տարվա ընթացքում գրանցվածներ		
				2003թ.	2004 թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, [%]
Անհատ ձեռնարկատերեր	63502	67116	105.7	5814	6293	108.2
Առևտրային իրավաբանական անձինք ընդամենը	49984	51480	103.0	2685	2796	104.1
ԸՆԴԱՄԵՆԸ	113486	118596	104.5	8499	9089	106.9
որից անհատ ձեռնարկատերեր և ՀՀ օրենսդրությանը համապատասխան տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձիք	89759	95936	106.9	-	-	-

Գծապատկեր 3 Առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի տեսակարար կշիռը գրանցվածների ընդհանուր թվաքանակում 2004 թ.



[4] ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 և 2004 թթ.:

Իրականացված ուսումնասիրության և կատարված փորձագիտական գնահատման համաձայն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց շուրջ 97,5%[5]-ը և անհատ ձեռնարկատերերի՝ 98%[6]-ը ՓՄՁ սուբյեկտներ են: Ամփոփելով նշվածը՝ 01.01.2005թ. դրությամբ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը ստացվում է 93874, որոնք կազմում են բոլոր գրանցված անհատ ձեռնարկատերերի և ՀՀ օրենսդրությանը համապատասխան տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց շուրջ 97,8%-ը: Այս ցուցանիշները 01.01.2004թ. դրությամբ համապատասխանաբար կազմել է 87605 կամ 97.6%:

Գծապատկեր 4 ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշռի դինամիկան 2003 և 2004թթ. գրանցվածների ընդհանուր թվաքանակում[7]



[5] Տվյալ ցուցանիշը հաշվարկվել է վիճակագրական բացառման մեթոդի կիրառմամբ՝ հաշվի առնելով խոշոր առևտրային կազմակերպությունների քանակը:

[6] Տվյալ ցուցանիշը հաշվարկվել է ընտրանքային դիտարկման վիճակագրական մեթոդի կիրառմամբ:

[7] Անհատ ձեռնարկատերեր և ՀՀ օրենսդրությանը համապատասխան տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձիք:

Աղյուսակ 5

ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների բաշխվածքը գրանցվածների մեջ 2003 և 2004 թթ.

Տարի	ՓՄՁ սուբյեկտներ [%]				Խոշոր [%]
	Գերփոքր	Փոքր	Միջին	Ընդամենը	
2003 վերջ	79.1	14.2	4.3	97.6	2.4
2004 վերջ	80.4	13.4	3.9	97.8	2.2

Աղյուսակ 6

ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի 2003 և 2004թթ.

Ճյուղ	2003 թվական		2004 թվական	
	ՓՄՁ սուբյեկտներ	Խոշոր	ՓՄՁ սուբյեկտներ	Խոշոր
	[%]		[%]	
Արդյունաբերություն	**90.8**	9.2	**91.6**	8.4
Գյուղատնտեսություն[8]	**97.0**	3.0	**96.5**	3.5
Շինարարություն	**86.1**	13.9	**91.4**	8.6
Առևտուր	**99.4**	0.6	**99.4**	0.6
Տրանսպորտ	**77.0**	23.0	**77.5**	22.5
Կապ	**87.4**	12.6	**89.3**	10.7
Ծառայություններ	**81.7**	18.3	**87.5**	12.5
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ	**97.6**	**2.4**	**97.8**	**2.2**

Աղյուսակ 6-ից ակնառու է դառնում, որ Հայաստանում 2004թ. ՓՄՁ սուբյեկտները առավել ակտիվ գործել են առևտրի և արդյունաբերության ոլորտներում, որտեղ ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը կազմում է 99.4 և 91.6 տոկոս: ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը բավականին մեծ է նաև գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թվաքանակում և շինարարությունում, որը համապատասխանաբար կազմում է 96.5 և 91.4 տոկոս: Նշանակալի է նրանց դերը կապի (89.3%), ծառայությունների (87.5%) և տրանսպորտի (77.5%) ոլորտներում:

[8] Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող կազմակերպություններ:

Գծապատկեր 5 Գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների տեսակարար կշիռը ըստ տնտեսության ճյուղերի 2003 և 2004թթ.



Աղյուսակ 7

2003 և 2004 թթ. նոր ստեղծված ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների թվաքանակը

Տարվա ընթացքում	Գրանցված տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակը	ՓՄՁ սուբյեկտներ		Խոշոր	
		Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
2003	8499	8295	97.6	204	2.4
2004	9089	8889	97.8	200	2.2

Աղյուսակ 8

ՓՄՁ սուբյեկտների բաշխվածությունը ք. Երևանում և ՀՀ այլ մարզերում 2003 և 2004թթ.

Մարզը	2003 թվական		2004 թվական	
	ՓՄՁ սուբյեկտներ		ՓՄՁ սուբյեկտներ	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
ք.Երևան	42401	48.4	45529	48.5
ՀՀ այլ մարզեր	45204	51.6	48345	51.5

Երևան քաղաքում և ՀՀ այլ մարզերում ՓՄՁ սուբյեկտների բաշխվածությունը բնութագրող ցուցանիշների և ՀՀ-ում անցկացված վերջին մարդահամարի արդյունքների համադրումը հնարավորություն է տալիս ստանալ միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած ցուցանիշներ, որոնք ներկայացված են աղյուսակ 9-ում:

ՀՀ-ում անցկացված վերջին մարդահամարի արդյունքների համաձայն ՀՀ-ում առկա բնակչության թվաքանակը կազմել է 3002.6 հազ. մարդ[9], որոնցից՝ 1091.2 հազար մարդ կամ 36.3%-ը մայրաքաղաք Երևանում, իսկ 1911.4 հազար մարդ կամ 63.7%-ը ՀՀ այլ մարզերում:

Աղյուսակ 9

ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 1000 բնակչի հաշվով 2003 և 2004 թթ.

	2003 թ.	2004 թ.
ՀՀ-ում 1000 բնակչի հաշվով ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը	29.2	31.3
ք. Երևանում 1000 բնակչի հաշվով ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը	38.9	41.7
ՀՀ այլ մարզերում 1000 բնակչի հաշվով ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը	23.6	25.3

Աղյուսակ 9-ում ներկայացված ցուցանիշները հիմք են հանդիսանում այն եզրահանգման համար, որ մայրաքաղաք Երևանում և ՀՀ այլ մարզերում գոյություն ունի գործարար ակտիվության մա-

[9] ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թվականի հունվար-դեկտեմբերին»:

կարդակների էական տարբերություն, որը և առաջ է բերում սոցիալ-տնտեսական զարգացման նշանակալի անհամամասնություններ, ինչը հիմնականում ավելի սուր է արտահայտված հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում:

Գծապատկեր 6 ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 1000 բնակչի հաշվով 2003 և 2004 թթ.



Զբաղվածություն

Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2004թ., ըստ գնահատման, կազմել է 1225.7 հազ. մարդ, որոնց 90.6%-ը կամ 1110.9 հազար մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.4 %-ը կամ 114.8 հազ. մարդ չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել են գործազուրկի կարգավիճակ: Սակայն մի շարք հետազոտություններ, վերլուծություններ, ինչպես նաև առկա փորձագիտական գնահատականները վկայում են այն մասին, որ այդ ցուցանիշն իրականում ավելի մեծ է քան

9.4%-ը և, ըստ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության, տատանվում է 30-40 %-ի շրջանակներում:

Աղյուսակ 10

ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների թվաքանակը 2003 և 2004 թթ.

Տարի	Զբաղվածության ընդհանուր մակարդակը		Գործազրկություն	
	ՓՄՁ սուբյեկտներում Տոկոսը զբաղվածների ընդհանուր թվաքանակում[10]	Տնտեսության մեջ զբաղված տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը (հազ. մարդ)	Գործազուրկների թիվը (հազ. մարդ)	Տոկոսը զբաղվածների ընդհանուր թվաքանակում
2003	31.0	1107.6	124.8	10.1
2004	32.9	1110.9	114.8	9.4

Գծապատկեր 7 ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը տնտեսության մեջ զբաղված տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակում 2003 և 2004 թթ.



[10] Ներառված չեն պետական կառավարման համակարգում և գյուղացիական տնտեսություններում զբաղվածները, որոնց ներառելու դեպքում տնտեսությունում զբաղվածների ընդհանուր թվաքանակը կազմում է 1,107.6 հազ. մարդ 2003թ. համար և 1110.9 հազ. մարդ 2004թ. համար:

Աղյուսակ 11

ՓՄՁ սուբյեկտներում և խոշոր կազմակերպություններում աշխատողների թվաքանակի բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի 2003 և 2004թթ.

Ճյուղ	2003 թվական		2004 թվական	
	ՓՄՁ սուբյեկտներ	Խոշոր	ՓՄՁ սուբյեկտներ	Խոշոր
	[%]		[%]	
Արդյունաբերություն	27.8	72.2	29.3	70.7
Գյուղատնտեսություն[11]	68.8	31.2	62.6	37.4
Շինարարություն	33.5	66.5	43.8	56.2
Առևտուր	77.1	22.9	78.3	21.7
Տրանսպորտ և Կապ	8.3	91.7	9.5	90.5
Ծառայություններ	16.5	83.5	17.9	82.1
ԸՆԴԱՄԵՆԸ, ՀՀ[12]	**31.0**	**69.0**	**32.9**	**67.1**

Գծապատկեր 8 Գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններում աշխատողների թվաքանակի բաշխվածքը 2003 և 2004թթ.,



[11] Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող կազմակերպություններ:

[12] Ներառված չեն պետական կառավարման համակարգում և գյուղացիական տնտեսություններում զբաղվածները, որոնց ներառմամբ տնտեսությունում զբաղվածների ընդհանուր թվաքանակը կազմում է 1,107.6 հազ. մարդ 2003թ. համար և 1110.9 հազ. մարդ 2004թ. համար:

Գծապատկեր 9 Գերփոքր,փոքր և միջին կազմակերպություններում աշխատողների թվաքանակի բաշխվածքը ըստ տնտեսության ճյուղերի 2003 և 2004թթ., տոկոսներով



Արտադրողականություն ինդեքս

ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների արտադրողականության համեմատության համար հաշվարկվել է «արտադրողականության ինդեքս»: «Արտադրողականության ինդեքսը» ցույց է տալիս, որ, եթե ամբողջ տնտեսության արտադրողականությունը

ընդունենք հավասար 100, և այն համեմատենք ՓՄՁ սուբյեկտների արտադրողականության հետ, ապա կստանանք ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների արտադրողականության տարբերությունը տոկոսներով:

Աղյուսակ 12

Աշխատանքի արտադրողականության ինդեքսն[13] ՓՄՁ սուբյեկտներում և խոշոր կազմակերպություններում

		Արտադրողականության ինդեքս	
		2003 թվական	2004 թվական
ՓՄՁ սուբյեկտներ	Գերփոքր	149.3	180.8
	Փոքր	189.2	120.7
	Միջին	143.0	145.3
	Ընդամենը	**126.9**	**144.6**
Խոշոր		84.7	84.5

Աղյուսակ 12-ում ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ ՓՄՁ սուբյեկտների արտադրողականության ինդեքսն ավելի բարձր է քան խոշոր կազմակերպություններինը, ինչը կարելի է բացատրել նրանով, որ ՓՄՁ սուբյեկտները ճկուն են, արագ են հարմարվում շուկայում կատարվող փոփոխություններին, փոքր ներդրումների հաշվին կարող են ապահովել զգալի թվով աշխատատեղեր:

ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների արտադրողականության ինդեքսների համեմատությունը ցույց է տալիս, որ 2003թ. ՓՄՁ սուբյեկտների արտադրողականությունը 1.5 անգամ ավելի բարձր է եղել, քան խոշորներինը, իսկ 2004թ.՝ 1.7 անգամ: Դրա հետ մեկտեղ ուշագրավ է նաև այն, որ ՓՄՁ սուբյեկտների շրջանում արտադրողականության ամենաբարձր ցուցանիշներն արձանագր-

[13] Արտադրողականությունը հաշվարկվել է ստեղծված ավելացված արժեք և աշխատողների թվաքանակ հարաբերակցությամբ:

վել են գերփոքր և միջին կազմակերպություններում՝ 2004թ. կազմելով 180.8 և 145.3 տոկոս:

Գծապատկեր 9 Աշխատանքի արտադրողականության ինդեքսը ՓՄՁ սուբյեկտներում և խոշոր կազմակերպություններում 2003 և 2004 թթ.



Արտաքին առևտուր

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2004 թվականին, ընթացիկ գներով, կազմել է 1099153.1 մլն դրամ կամ 2066 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 381380.1 մլն դրամ (715 մլն. ԱՄՆ դոլար) և ներմուծումը՝ 717773 մլն դրամ (1351 մլն. ԱՄՆ դոլար): Նույն ժամանակահատվածում առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը կազմել է 336392.8 մլն դրամով (635.9 մլն ԱՄՆ դոլարով):

Աղյուսակ 13

Արտաքին առևտրաշրջանառության ծավալների դինամիկան 2003 և 2004թթ. ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների

		Արտահանում	Ներմուծում	Արտաքին առևտրաշրջա-նառություն	Ընթացիկ հաշվի դեֆիցիտ
2003	Ընդամենը **[մլն. դրամ]**	409152.3	735812.8	1144965.1	326660.5
	ՓՄՁ[14] [%]	14.3	31.6	25.4	-
	Խոշոր [%]	85.7	68.4	74.6	-
2004	Ընդամենը **[մլն. դրամ]**	381380.1	717773.0	1099153.1	336392.8
	ՓՄՁ[14] [%]	15.7	34.8	28.2	-
	Խոշոր [%]	84.3	65.2	71.8	-

Աղյուսակ 13-ում ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտաքին առևտրաշրջանառության մեջ բավականին ցածր է. արտահանման մեջ այն կազմում է 14.3, իսկ ներմուծման մեջ՝ 31.6 տոկոս 2003 թ. համար և համապատասխանաբար՝ 15.7 և 34.8 տոկոս 2004 թ. համար: Վերլուծության ենթարկելով երկրի արտաքին առևտրաշրջանառության մեջ, մասնավորապես արտահանման ծավալում, ՓՄՁ ոլորտի փոքր մասնակցությունը՝ հնարավոր է դառնում անել հետևություններ այն մասին, որ ՓՄՁ սուբյեկտները ներկայումս հիմնականում իրենց համար թիրախային են համարում ներքին շուկան, չեն կարողանում բավարարել արտաքին շուկայի կողմից ներկայացված պահանջները և արտահանման ընթացքում հանդիպում են լուրջ խոչընդոտների կամ երկրի ներսում կամ էլ արտաքին շուկայում իրենց արտադրանքը ներկայացնելիս:

[14] Տվյալ ցուցանիշը հաշվարկվել է վիճակագրական բացառման մեթոդի կիրառմամբ՝ հիմք ընդունելով իրականացված վիճակագրական դիտարկումը:

Գծապատկեր 10 ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռը արտահանման ծավալում 2003 և 2004թթ.



Գծապատկեր 11 ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռը ներմուծման ծավալում 2003 և 2004թթ.



ՓՄՁ զարգացման ինդեքս

Երկրի տնտեսական համակարգում ՓՄՁ ոլորտի տեղի և նշանակության առավել ամբողջական պատկեր ստանալու հնարավորություն է ընձեռում վերջերս Միացյալ ազգերի կազմակերպության ՓՄՁ ոլորտի վերաբերյալ իրականացված հետազոտություններում կիրառվող ագրեգացված մի ցուցանիշ, որը կոչվում է «ՓՄՁ զարգացման ինդեքս»: Այն հանդիսանում է նորույթ և, ի թիվս բազմաթիվ այլ երկրների, Հայաստանում մինչ օրս չի հաշվարկվել:

ՓՄՁ զարգացման ինդեքսն ընդհանրական տնտեսական ցուցանիշ է, որն իր մեջ ներառում է ամբողջ ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը ազգային տնտեսության մակարդակով և հիմնված է 3 հիմնական տնտեսական գործոնների վրա, որոնք են.

- մասնավոր հատվածի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում,
- ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ,
- ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում:

ՓՄՁ զարգացման ինդեքսը կարող է արտահայտվել տոկոսներով և/կամ ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունում հնարավոր է դարձել վերծանել ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման մեթոդոլոգիան և առկա մակրոտնտեսական բազային ցուցանիշների համադրմամբ դուրս բերել վերոնշյալ ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում 2002-2004թթ. կտրվածքով, որը և ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 14

ՀՀ ՓՄՁ զարգացման ինդեքսը 2002-2004թթ.

Տարի	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում [%]	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ [%]	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում [%]	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ [ԱՄՆ դոլար]	ՓՄՁ զարգացման ինդեքս [ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով]
2002	81	34.4	28.2	739.9	58.1
2003	83	36.5	31.0	873.4	82.0
2004	84	38.6	32.9	1104.4	117.8

Գծապատկեր 12 ՀՀ ՓՄՁ զարգազման ինդեքսի դինամիկան 2002-2004թթ.



ՄԱՍ 2

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համեմատական վերլուծություն

Իրականացված վերլուծության արդյունքների և դուրս բերված ցուցանիշների հիման վրա հնարավոր է դարձել ձևավորել ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի վերաբերյալ ամբողջական պատկեր: Տեղեկագրում ներկայացված տեղեկատվությունը անկասկած թերի և ոչ ամբողջական կլիներ առանց ՀՀ և մի շարք զարգացող ու զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների համադրման և վերլուծության:

Չնայած, որ իրականացված վերլուծության արդյունքում ստացվել է ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի առավել ամբողջական պատկեր, այնուամենայնիվ մեր խորին համոզմամբ տարածաշրջանի և աշխարհի այլ երկրների տնտեսություններում ընթացող տրանսֆորմացիոն գործընթացները, մասնավորապես, ՓՄՁ ոլորտում հաշվի առնելու և ՀՀ-ում նմանատիպ գործընթացների համադրումը և համապատասխան զուգահեռների անցկացումը տեղեկագիրը դարձնում են ավարտուն:

ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր ունի ինչպես զարգացող, այնպես էլ՝ զարգացած երկրների տնտեսություններում, ինչի մասին վկայում են ստորև ներկայացված համեմատական վերլուծության արդյունքները:

Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ սուբյեկտները կազմում են տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակի 97-99%-ը: ԱՄՆ-ում փոքր բիզնեսի (ՓՄՁ) տեսակարար կշիռը կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում կազմում է 99.7%[15],

[15] Small Business in Japan “White paper on small and medium entreprises in Japan” MITI, 2002, 219 p., p. 109:

ՀՆԱ-ի մեջ՝ 52%, իսկ զբաղվածների ընդհանուր թվաքանակում՝ 53%: Համաձայն Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (OECD) տվյալների Ֆրանսիայում և Իսպանիայում կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտները կազմում են 99.8%, Ճապոնիայում՝ 99.7%, Շվեցարիայում՝ 99 %: ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր ունի նաև այդ երկրներում զբաղվածության կարգավորման, այսինքն աշխատանքի շուկայում առաջարկի ու պահանջարկի հավասարակշռության ապահովման գործում: Օրինակ՝ Ֆրանսիայում ՓՄՁ սուբյեկտներում զբաղված են 7.9 մլն մարդ որը կազմում է ակտիվ ազգաբնակչության 65 %-ը, իսկ Ճապոնիայում 31.2 մլն մարդ, որը կազմում է աշխատատեղերի 69.5%: Այս ցուցանիշը Շվեցարիայում հասնում է 69.1 %-ի, Գերմանիայում 70%-ի, իսկ Իսպանիայում 80%-ի:

Ինչ վերաբերում է անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներին, ինչպես տարածաշրջանում[16], այնպես էլ աշխարհում, ապա դրանց համեմատությունը Հայաստանի հետ՝ ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների կտրվածքով, տալիս է բավականին հետաքրքիր պատկեր:

Իրականացված դիտարկումների արդյունքում համեմատական վերլուծության համար ընտրվել են հետևյալ երկրները՝ Ադրբեջան, Վրաստան, Սլովակիա, Սլովենիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Բուլղարիա, Խորվաթիա, Սերբիա, Չեխիա և Հունգարիա: Նշված երկրների ընտրությունը պայմանավորված է աշխարհագրական դիրքով[17] և այս կամ այն կերպ Հայաստանի հետ համադրելի տնտեսական զարգացման միտումներ, տարածք, բնակչության թվաքանակ և մի շարք այլ հանգամանքներից ելնելով:

[16] Հարավ կովկասյան տարածաշրջան:
[17] Ադրբեջան, Վրաստան:

Աղյուսակ 15

Հայաստանում և մի շարք անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներում ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշները 2004 թ.[18]

Երկիր	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում [%]	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ [%]	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում [%]	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ [ԱՄՆ դոլար]	ՓՄՁ զարգացման ինդեքս [ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով]
Սլովենիա	65.0	56.5	62.6	11026	2534
Խորվաթիա	99.0	56.0	65.0	5053	1820
Էստոնիա	80.0	73.7	55.6	4795	1572
Լատվիա	77.0	58.2	69.3	3988	1238
Լիտվա	70.0	63.0	70.0	3605	1112
Հունգարիա	80.0	36.9	56.8	6581	1103
Սլովակիա	80.0	45.3	66.0	4403	1053
Չեխիա	80.0	32.7	56.7	6742	1000
Բուլղարիա	75.0	30.0	42.2	1984	188
Սերբիա	55.0	46.6	32.4	1879	156
Ռումինիա	65.0	55.0	21.0	2091	155
Հայաստան	84.0	38.6	32.9	1104.4	117.8

Աղյուսակ 16

Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներ 2004 թ.

Երկիր	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում [%]	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ [%]	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում [%]	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ [ԱՄՆ դոլար]	ՓՄՁ զարգացման ինդեքս [ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով]
Հայաստան	84	38.6	32.9	1104.4	117.8
Ադրբեջան	60	41.3	40.0	1041.0	103.2
Վրաստան	65	29.4	32.0	1135.3	69.4

[18] UN ECE ՓՄՁ ոլորտին առընչվող 2004 թ. տեղեկատվական բազա

Գծապատկեր 13 *Հայաստանում, Աղրբեջանում և Վրաստանում մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսության մեջ 2004 թ.*



Գծապատկեր 14 *Հայաստանում և մի շարք անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներում մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսության մեջ 2004 թ.*



Գծապատկեր 15 *ՓՄՁ տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում 2004 թ.*



Գծապատկեր 16 *ՓՄՁ տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ Հայաստանում և մի շարք անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներում 2004 թ.*



Գծապատկեր 17 *ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում 2004 թ.*



Գծապատկեր 18 *ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում Հայաստանում և մի շարք անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներում 2004 թ.*



Գծապատկեր 19 *Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլարով 2004 թ.*



Գծապատկեր 20 Հայաստանում և մի շարք անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներում մեկ շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլարով 2004թ.



Գծապատկեր 21 *ՓՄՁ զարգացման ինդեքսը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում[19] 2004 թ.*



Գծապատկեր 22 *ՓՄՁ զարգացման ինդեքսը Հայաստանում և մի շարք անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներում[19] 2004 թ.*



[19] ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով:

Վերջաբան

Ամփոփելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004 թթ.» տեղեկագրի շրջանակներում կատարված վերլուծությունները՝ կարելի է փաստել, որ փոքր և միջին ձեռնարկատիրությունը նշանակալի դեր է խաղում Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգում: Այս ոլորտը որոշիչ դերակատարում ունի Հայաստանում տնտեսական աճի ապահովման, գործազրկության մակարդակի կրճատման, սոցիալական լարվածության թուլացման, մայրաքաղաքի և ՀՀ մարզերի միջև առկա տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարման գործընթացներում: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ՓՄՁ ոլորտը բնութագրող գրեթե բոլոր հիմնական ցուցանիշներով 2003 և 2004 թթ. երկրում արձանագրվել են աճի զգալի միտումներ, ինչն անժխտելի է դարձնում այս ոլորտի իրական ներուժը երկրի հետագա տնտեսական զարգացման և բարգավաճման գործում: Հիմնվելով իրականացված հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է նշել, որ ՀՀ տնտեսության և մասնավորապես՝ ՓՄՁ ոլորտի զարգացումը վերջին մի քանի տարիների ընթացքում ունի կայուն միտումներ: Տեղեկագրի 1-ին մասում ներկայացված տվյալները վկայում են ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացումների մասին, սակայն ստացված ցուցանիշները խորությամբ ուսումնասիրելու դեպքում կարելի է նկատել, որ զարգացման միտումները երկրի իրական տնտեսական աճի ապահովման տեսանկյունից դեռևս կրում են ավելի շատ քանակական, քան որակական բնույթ: Չնայած տեղեկագրի 1-ին մասում բերված ցուցանիշները, համադրելով 2-րդ մասում ներկայացված՝ Հարավկովկասյան տարածաշրջանի (Ադրբեջան, Վրաստան) երկրների համանման ցուցանիշների հետ, ստաց-

վում է բավականին հուսադրող պատկեր, սակայն դրանք աշխարհի մի շարք զարգացող և զարգացած երկրների նույն ցուցանիշների հետ համեմատական վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում մեր տնտեսական համակարգի և մասնավորապես ՓՄՁ ոլորտի թերզարգացվածության աստիճանը: Այսպիսով, դեռ շատ անելիքներ կան մինչ հնարավոր կլինի վստահորեն խոսել երկրում ՓՄՁ ոլորտի զարգացմամբ պայմանավորված իրական/շոշափելի տնտեսական աճի մասին, երբ ՀՀ տնտեսության զարգացման մակարդակը համադրելի կլինի ոչ միայն տարածաշրջանի, այլ նաև մի շարք զարգացած և/կամ զարգացող երկրների տնտեսական զարգացման հետ: